ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/8338-2022

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-169-22.02.2022-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի մարտի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 278 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-169-22.02.2022-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում» փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի» 305-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ:

Նախագծով նախատեսվում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով» նախատեսված իրավախախտումների համար նշանակված տուգանքի գումարի 70 տոկոսը, իսկ օրենսգրքի 123-րդ, 123.1-ին, 123.3-րդ, 123.4-րդ, 123.5-րդ, 123.6-րդ, 123.7-րդ, 124-124.4-րդ, 124.6-րդ, 124.7-րդ, 125-րդ, 128-րդ, 129.2-րդ, 129.3-րդ, 131-րդ, 132-րդ, 135.2-րդ, 140-րդ և 170.3-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների համար նշանակված տուգանքի գումարի 50 տոկոսը, տուգանք նշանակելու մասին որոշումը վարչական իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում վճարելու դեպքում, իրավախախտում կատարած անձանց նկատմամբ նշանակված տուգանքը համարվելու է ամբողջությամբ մուծված:

Նախագծի հիմնավորման համաձայն՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում» փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը բխում է մի կողմից վարչարարության բարելավման պետության պոզիտիվ պարտականությունից, մյուս կողմից՝ քաղաքացիների օրինաչափ վարքագիծ դրսևորելու պարտականությունից:

Պայմանավորված իրավախախտումների առանձնահատկություններով՝ նախագծով տարբեր իրավախախտումների համար սահմանվում են տարբեր արտոնություններ՝ կապված իրավախախտման համար տուգանքը սահմանված ժամկետի ավարտից շուտ վճարելու փաստով:

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է բարձրացնել քաղաքացիների կողմից տուգանքները ժամանակին վճարելու պատրաստակամությունը՝ իջեցնելով տուգանքի չափը օրինապահ քաղաքացիների համար:

Միաժամանակ, ներկայացված նախագծի ընդունման արդյունքում էականորեն կբեռնաթափվեն վարչական մարմինները, կնվազեն նրանց կողմից օգտագործվող միջոցները, քանզի վարչական ակտի բողոքարկման համար վճարվող պետական տուրքը որոշ դեպքերում գրեթե համասար է լինում 10-օրյա ժամկետում տուգանքի մուծման չափին, մյուս կողմից՝ կթեթևանա վարչական դատարանների գերծանրաբեռնված վիճակը, ինչպես նաև քաղաքացիները կազատվեն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին»

ՀՀ օրենքի 67-րդ հոդվածով նախատեսված կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելու պարտականությունից:

Նախագծով առանձնացվել են մի քանի իրավախախտումներ, որոնց դեպքում արտոնության հնարավորությունն առավել է և տալիս է կիսով չափ վճարման ենթակա գումարը նվազեցնելու հնարավորություն, ինչը պայմանավորված է այդ իրավախախտումների առանձնահատկություններով և տեսակով: Մյուս իրավախախտումների համար առաջարկվում է տուգանքի 30 տոկոսի չափով պակաս վճարելու արտոնության սահմանում: Տվյալ արտոնություններից օգտվելու պայման է նախագծով առաջարկվող ժամկետում սահմանված տուգանքների վճարումը:

Հարկ է նշել նաև, որ ոչ սթափ վիճակում կատարված իրավախախտումների նկատմամբ նախագծով նախատեսվող արտոնությունները չեն տարածվելու:

Նախագծի վերաբերյալ առկա են հետևյալ դիտարկումները:

Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 305-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու համար նշանակված տուգանքի չափի յոթանասուն տոկոսը տուգանք նշանակելու որոշումը վարչական իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասն օրվա ընթացքում վճարելու դեպքում տուգանքը համարվում է ամբողջությամբ մուծված՝ բացառությամբ սույն հոդվածի 9-րդ և 10-րդ մասով նախատեսված դեպքերի:

Այս առումով հարկ ենք համարում նշել, որ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումները միմյանցից էականորեն տարբերվող բովանդակություն ունեցող արարքներ են և ունեն վտանգավորության տարբեր աստիճաններ, ուստի օրենսգրքով նախատեսված բոլոր վարչական իրավախախտումների համար նույն՝ տուգանքի չափի յոթանասուն տոկոս դրույքաչափ նախատեսելը խնդրահարույց է: Այս համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 305-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսվող որոշ վարչական իրավախախտումներ կապված են առավել վտանգի աղբյուրի՝ տրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում իրավախախտումների կատարման հետ, որոնց համար նախատեսված են առավել խիստ սանկցիաներ, որն իրավաչափ է և բխում է վարչական պատասխանատվության տրամաբանությունից:

Ներկայացված տեքստով նախագծի ընդունումը կարող է հանգեցնել ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտի իրավախախտումների թվի ավելացմանը, ինչպես նաև կանխարգելիչ և դաստիարակչական գործառույթի բովանդակազրկմանը կամ անհիմն թուլացմանը:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նախագծով նախատեսված իրավական կարգավորումների իրացման համար հստակ կառուցակարգեր սահմանված չեն, որոնք հնարավոր կդարձնեն դրանց արդյունավետ և նպատակային կիրառումը:

Անդրադառնալով նախագծի հիմնավորվածությանը՝ հարկ է նշել, որ այն հնարավորություն չի տալիս գնահատելու նախագծով նախատեսվող իրավական կարգավորումների գործնական անհրաժեշտությունը, քանի որ պարզ չէ, թե ինչ ուսումնասիրությունների կամ վերլուծությունների հիման վրա է նախագծի հեղինակը եկել այն եզրահանգման, որ նման կարգավորումների առկայության պարագայում էականորեն

կբեռնաթափվեն վարչական մարմինները, կնվազեն նրանց կողմից օգտագործվող միջոցները, կբարձրանա քաղաքացիների կողմից տուգանքները ժամանակին վճարելու պատրաստակամությունը, ինչպես նաև չի ներկայացվել որևէ տեղեկատվություն, որը հավաստում է, որ իրականացվել են վիճակագրական վերլուծություններ վարչական վարույթների ավելացման, ինչպես նաև տուգանքների չվճարման պատճառների վերաբերյալ:

Հարկ է նշել, որ ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ գանձված գումարների տոկոսների համեմատական արտահայտությամբ 2021 թվականին գանձման ենթակա գումարներից չի գանձվել 30%, 2020 թվականին գանձման ենթակա գումարներից չի գանձվել 25%, իսկ 2019 թվականին՝ 26% գումար կամ միջինացված ցուցանիշով յուրաքանչյուր տարի գանձվել է ընդհանուր գումարի 70-75%-ը:

Այս առումով հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, 2014 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԴՈ–1176 որոշմամբ անդրադառնալով օրենքների հիմնավորվածությանը, արձանագրել է. «(…) օրենսդրությունն ստատիկ երևույթ չէ, այն կարող է և պետք է ենթարկվի դինամիկ փոփոխության՝ մշտապես կատարելագործվելով տնտեսական զարգացմանը, տեղի ունեցող միջազգային ինտեգրման գործընթացներին, հասարակական հարաբերությունների վերափոխմանն ու մի շարք այլ գործոններին համահունչ: (…) Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանը կարևորում է օրենսդրական փոփոխությունների գործընթացի կայունությունն ու ներդաշնակությունը, օրենքների փոփոխման հիմնավորվածությունն ու օբյեկտիվ անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է ընձեռում իրավունքի սուբյեկտին իր վարքագիծը համապատասխանեցնել փոփոխվող օրենսդրական նորմերին՝ թույլ չտալով իրավակիրառ մարմինների կողմից ցուցաբերված սուբյեկտիվիզմի դրսևորում և հայեցողության ընդլայնում:»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագիծը և դրան կից ներ-կայացված հիմնավորումը հնարավորություն չեն տալիս գնահատելու նախագծով կատարվող փոփոխությունների ընդունման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող օրենսգրքի գործող հոդվածը թողնել անփոփոխ:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ կառավարությունը կնախաձեռնի համա-պարփակ ուսումնասիրություն ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում անձի նկատմամբ նշանակված տուգանքի առավել սեղմ ժամկետում վճարման հետ կապված խրախուսական նորմեր նախատեսելու հարցի վերաբերյալ՝ վերլուծելով նաև վիճակագրական տվյալները և որից հետո, ըստ անհրաժեշտության՝ կախված ուսումնասիրության արդյունքներից, հանդես կգա համապատասխան օրենսդրական նախաձեռնությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 278 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-169-22.02.2022-ՊԻ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.03.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-169-22.02.2022-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 305-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

Հոդված 305. Տուգանք նշանակելու մասին որոշումը կատարելու ժամկետներն ու կարգը

1. Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

2. Եթե սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 7-րդ մասով, 111, 123, 123.1, 123.3, 123.4, 123.5 (բացառությամբ ութերորդ, իններորդ, տասնչորսերորդ եւ տասնհինգերորդ մասերի), 123.6, 123.7, 124, 124.1, 124.2, 124.3, 124.4, 124.6, 125, 126, 128, 129.2, 131, 132, 135.2, 140-րդ հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումը իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից հետո՝ երեսնօրյա ժամկետում, անձը դիմում է ոստիկանություն տուգանքի վճարումը տարաժամկետելու խնդրանքով, ապա վճարումը համարվում է տարաժամկետված դիմումի մեջ նշված ժամկետով, բայց ոչ ավելի, քան 6 ամիս:

3. Եթե մանր խուլիգանություն կատարած տասնվեցից մինչեւ տասնութ տարեկան անձինք ինքնուրույն վաստակ չունեն, տուգանքը գանձվում է ծնողներից կամ նրանց փոխարինող անձանցից:

4. Վարչական իրավախախտում կատարելու համար նշանակված տուգանքը խախտողի կողմից մուծվում է կենտրոնական գանձապետարանի համապատասխան հաշվին:

5. Ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման համար նշանակված տուգանքը խախտողը մուծում է կենտրոնական գանձապետարան, բացառությամբ իրավախախտման կատարման տեղում գանձվող տուգանքի:

6. Համայնքի ղեկավարների նշանակած տուգանքը մուտքագրվում է համապատասխան համայնքի բյուջե, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց թույլ տված իրավախախտումների համար նշանակված տուգանքը մուտքագրվում է պետական բյուջե:

7. Սույն օրենսգրքի 150.3-րդ հոդվածով գանձվող տուգանքները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության միջպետական եւ հանրապետական նշանակության ավտոճանապարհներին արձանագրված խախտումների համար՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական գանձապետարան, իսկ մարզային ավտոճանապարհներին արձանագրված խախտումների համար՝ համապատասխան համայնքի բյուջե:

8. Սույն օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու համար նշանակված տուգանքի չափի յոթանասուն տոկոսը տուգանք նշանակելու որոշումը վարչական իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասն օրվա ընթացքում վճարելու դեպքում

տուգանքը համարվում է ամբողջությամբ մուծված, բացառությամբ սույն հոդվածի 9-րդ եւ 10-րդ մասով նախատեսված դեպքերի:

9. Սույն օրենսգրքի 123-րդ, 123.1-ին, 123.3-րդ, 123.4-րդ, 123.5-րդ, 123.6-րդ, 123.7-րդ, 124-124.4-րդ, 124.6-րդ, 124.7, 125-րդ, 128-րդ, 129.2-րդ, 129.3-րդ, 131-րդ, 132-րդ, 135.2-րդ, 140-րդ, 170.3 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու համար նշանակված տուգանքի չափի հիսուն տոկոսը տուգանք նշանակելու որոշումը վարչական իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասն օրվա ընթացքում վճարելու դեպքում տուգանքը համարվում է ամբողջությամբ մուծված:

10. Սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգը չի տարածվում սույն օրենսգրքի 125.1, 126-րդ եւ 132-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավախախտումները կատարելու համար նշանակված տուգանքի որոշումների կատարման վրա:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը բխում է մի կողմից վարչարարության բարելավման պետության պոզիտիվ պարտականությունից, մյուս կողմից՝օրինաչափ վարքագիծ դրսեւորելու քաղաքացիների պարտականությունից:

Հարկ է վկայակոչել, որ քաղաքացու կողմից տուգանքը չվճարելու պատճառով ավելանում է նաեւ վարչական ակտի ընդունման պահին գործող օրենքով սահմանված կարգով տուգանքը չվճարելու հետեւանքով նախատեսված գումարը եւ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կատարողական գործողությունների կատարման համար նախատեսված ծախսերը վճարելու պարտականությունը, սակայն սա ապահովելու համար պետությունը նույնպես ծախսեր է իրականացնում, որոնք թեեւ փոխհատուցվում են, սակայն առաջացնում են վարչական մարմինների համար լրացուցիչ ու հավելյալ աշխատանք եւ ծանրաբեռնվածություն:

Պայմանավորված իրավախախտումների առանձնահատկություններով՝ տարբեր իրավախախտումների համար սահմանվել են տարբեր արտոնություններ՝ կապված իրավախախտման համար սահմանված տուգանքը սահմանված ժամկետի ավարտից շուտ վճարելու փաստով:

Սույն նախագծում հաշվի են առնվել նաեւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 125.1, 126-րդ հոդվածները, ինչպես նաեւ 132-րդ հոդվածի 3-րդ մասը, որոնք կատարելու համար սահմանված տուգանքների առչնությամբ նախագծի կարգավորումները չեն գործելու հանրային շահն ու անվտանգությունը ապահովելու նպատակով:

Հարկ է նշել, որ նախագծի հեղինակների կողմից օգտագործվել է «տուգանք նշանակելու որոշումը վարչական իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից» ձեւակերպումը, որի դեպքում կիրառելի է ինչպես իրավախախտում կատարած անձին տուգանք նշանակելու մասին որոշման հանձնումը, այնպես էլ դրա անհնարինության դեպքում պաշտոնական հրապարակումը՝ «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

2. Միջազգային փորձ տարբեր վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող արտոնությունների վերաբերյալ

Բազմաթիվ երկրներ վաղուց արդեն անցել են տուգանքների՝ նախքան հարկադիր բռնագանձումը վճարելու դեպքում արտոնություններ սահմանելու ռեժիմին, ինչը եւս մեկ անգամ ընդգծում է այս ռեժիմի արդյունավետությունը:

Կից ներկայացվում է տարբեր երկրների միջազգային փորձը վարչական իրավախախտումների վերաբերյալ տուգանք նշանակելու որոշումը կատարելու կարգի արտոնությունների վերաբերյալ.

- ՌԴ-ում 20 օրվա ընթացքում տուգանքը վճարելու դեպքում կա այն կիսով չափ պակաս վճարելու հնարավորություն,
- Ալբանիայում տուգանքները ամենացածրն են Եվրոպայում, իսկ տուգանքի վճարումը 5 օրվա ընթացքում ազատում է իրավախախտին սահմանված չափի 20 տոկոսից:
- Անդորայում տուգանքի՝ տեղում վճարման կամ 10 օրվա ընթացքում վճարման դեպքում գործում է -50% -ով պակաս վճարելու արտոնություն,
- Իսպանիայում ՃԵԿ կանոնների խախտման համար օտարերկրյա վարորդները պետք է վճարեն անմիջապես, հակառակ դեպքում մեքենան արգելանքի տակ է վերցվում մինչեւ տուգանքի վճարումը, իսկ տուգանքը տեղում կամ 20 օրվա ընթացքում վճարելու դեպքում 50%-ով պակաս վճարելու արտոնություն է գործում.
- Իտալիայում տուգանքը տեղում վճարելու դեպքում ծագում է տուգանքի առավելագույն սահմանաչափի միայն 25%-ի վճարման պարտականություն:
- Սլովակիայում 15 օրվա ընթացքում տուգանքը վճարելու դեպքում վճարվելիք գումարը բուն տուգանքի 2/3-ի չափով է:
- Սլովենիյաում տեղում կամ տուգանքը ստանալուց հետո 8 օրվա ընթացքում վճարելու դեպքում վճարման ենթակա է տուգանքի չափը կեսը:
- Թուրքիայում տուգանքը 15 օրվա ընթացքում վճարելու դեպքում վճարվելիք գումարը կազմում է տուգանքի որոշմամն սահմանված չափի 75%-ը:
- Ղրղզստանում 15 օրվա ընթացքում տուգանքի կեսը վճարելու դեպքում քաղաքու պարտավորությունը համարվում է կատարված:
- Մակեդոնիայում տուգանքի միայն 50 տոկոսը վճարելու արտոնությունը գործում է տուգանքի նշանակումից հետո 7 օրվա ընթացքում:

3. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է բարձրացնել քաղաքացիների կողմից տուգանքները ժամանակին վճարելու պատրաստակամությունը, միաժամանակ իջեցնելով տուգանքի չափը օրինապահ քաղաքացիների համար՝ազատելով նրանց հետագայում տուգանքի չմուծման արդյունքում այդ տուգանքներին ավելացած վարչական ակտի ընդունման պահին գործող օրենքով սահմանված կարգով գումարը չվճարելու հետեւանքով նախատեսված տուգանքի չափի ավելացած մասի վճարման, ինչպես նաեւ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով նախատեսված կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելու պարտականությունից:

Միաժամանակ ներկայացված նախագծի ընդունման արդյունքում էականորեն կբեռնաթափվեն վարչական մարմինները, կնվազեն նրանց կողմից օգտագործվող միջոցները, քանզի կողմից վարչական ակտի բողոքարկման համար վճարվող պետական տուրքը որոշ դեպքերում գրեթե

հավասար է լինելու 10-օրյա ժամկետում տուգանքի մուծման չափին, մյուս դեպքում՝կթեթեւանա վարչական դատարանների գերծանրաբեռնված վիճակը:

Նախագծով առանձնացվել են մի քանի իրավախախտում՝(123-րդ, 123.1-ին, 123.3-րդ, 123.4-րդ, 123.5-րդ, 123.6-րդ, 123.7-րդ, 124-124.4-րդ, 124.6-րդ, 124.7, 125-րդ, 128-րդ, 129.2-րդ, 129.3-րդ, 131-րդ, 132-րդ, 135.2-րդ, 140-րդ, 170.3 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումները), որոնց դեպքում արտոնության հնարավորությունը առավել է եւ տալիս է կիսով չափ փաստացի գանձվող/վճարման ենթակա գումարը նվազեցնելու հնարավորություն, ինչը պայմանավորված է այդ իրավախախտումների առանձնահատկություններով եւ տեսակով:Մյուս իրավախախտումների դեպքում առաջարկվում է տուգանքի 30 տոկոսի չափով պակաս վճարելու արտոնության սահմանում:

Այս արտոնություններից օգտվելու պայման է հանդիսանում նախագծով առաջարկվող ժամկետում դրանց վճարումը, որը բաց թողնելուց հետո այն, բնականաբար, չի գործելու:

Հարկ է նշել հեղինակների առանձնահատուկ մոտեցումը ոչ սթափ վիճակում կատարված զանցանքներին. Ոչ սթափ վիճակում կատարված իրավախախտումների առնչությամբ սույն նախագծով սահմանված արտոնությունը չի տարածվում: